



2014թ. օգոստոսի 14-ին «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի աշխատակիցները Լոռու մարզի Քարինջ համայնքի դպրոցին հանձնեցին համակարգիչ, իր բոլոր սարքավորումների հետ միասին (համակարգիչ, տպիչ-սկաներ-քսերոքս), որը նախատեսված է դպրոցի գրադարանում տեղեկատվական կետ ստեղծելու համար:

Դեռևս 2013թ. դեկտեմբերին Քարինջ համայնքի դպրոցում «Քաղաքացիների ծայն և գործողություն» մեթոդալոգիայով իրականացված խմբային քննարկումների ժամանակ, աշակերտները առաջնային համարեցին գրադարանում տեղեկատվական կետի ստեղծման խնդիրը: Մի քանի ամիս շարունակ աշակերտները այս հարցի լուծման համար ակտիվ խմբի հետ փորձել են իրականացնել ֆոնդիայթայթման աշխատանքներ :

Քարինջ համայնքը ունի բազմաթիվ խնդիրներ, խնդիրներից մեկը համայնքի դպրոցում տեղեկատվական կետի բացակայությունն է, որը դժվարեցնում է աշակերտներին՝ անհրաժեշտ տեղեկատվություն ձեռք բերելու գործում: Դեռևս 2014թ. հունիսին աշակերտական խորհրդի, դպրոցի տնօրինության և «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի միջև ձեռք էր բերվել եռակողմ պայմանավորվածություն՝ համայնքի գրադարանում տեղեկատվական կետի ստեղծման ծրագիր իրականացնելու համար: Համայնքի գրադարանը այսուհետ կունենա տեղեկատվական կետ, որը կսկսի գործել 2014 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ: Աշակերտները մեծ ոգևորությամբ էին սպասում համակարգչին և հավելեցին, որ այսուհետ Քարինջի դպրոցը կունենա էլ առավել բարձր առաջադիմություն ուսման մեջ:

Համակարգչի հանձնումից հետո տեղի ունեցավ քննարկում, աշակերտները և տնօրենի հետ, որտեղ տնօրենի նշումից պարզվեց, որ առաջիկայում դպրոցը կունենա ընթերցասրահ, որտեղ և կտեղադրվի համակարգիչը իր ինտերնետ կապով, որտեղ աշակերտները կարող են հանգիստ աշխատել և ձեռք բերել իրենց անհրաժեշտ տեղեկատվական նյութերը: Քննարկման ժամանակ ձեռք բերվեց պայմանավորվածություն, վերանորոգել մարզադաշտի հանդերձարանը և կատարել ցանկապատման աշխատանքներ դպրոցի միջոցներով և ՏԻՄ օժանդակությամբ:

Հիշեցնենք, որ դպրոցի գրադարաններում տեղեկատվական կետի ստեղծման ծրագիր է իրականացվում Մեծ Այրում, Զիլիզա և Քարինջ համայնքների միջնակարգ դպրոցներում: Դպրոցի գրադարանների հագեցվածության ծրագրերը իրականացվում են «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի կողմից «Համայնքային աջակցության ծրագրի» շրջանակներում «Վորլդ Վիժն Հայաստան»-ի ֆինանսական օժանդակությամբ: